



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1098-Ա/2

09.07.2021թ.

2021թ. ԱՊՐԻԼԻ 20-26-Ը ԱՌՑԱՆՑ ՁԵՎՈՎ ԿԱՅԱՑԱԾ «ՔԻՄԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ
ՄԵՆԴԵԼԵԵՎՅԱՆ 55-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵԶՐԱՓՎԱԿԻՉ ՓՈՒԼԻ
ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի N 605-Ա/2 հրամանով հաստատված «Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման կարգի» 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջը՝

Հրամայում եմ

- Հաստատել 2021թ. ապրիլի 20-26-ը առցանց ձևով կայացած «Քիմիա» առարկայի Մենդելեևյան 55-րդ միջազգային օլիմպիադայում հաղթած անվանական կրթաթոշակ ստացողների ցանկը՝ համաձայն հավելվածի:
- Նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վարչությանը /պետ՝ Ա.Թադևոսյան/ համապատասխան ուսումնական հաստատություններին տրամադրել ֆինանսական միջոցներ ՀՀ ԿԳՄՍ նախարարի վերոնշյալ հրամանով հաստատված կարգով սահմանված չափով՝ աշակերտներին կրթաթոշակ տրամադրելու համար:

3. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը /մամուլի քարտուղար՝ Գ.Մելիքբեկյան/ ՀՀ ԿԳՄՍ նախարարի վերոնշյալ հրամանով հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն ապահովել հրամանի հրապարակումը նախարարության պաշտոնական կայքում:
4. Հրամանի կատարման ապահովումը հանձնարարել հանրակրթության վարչությանը /պետ՝ Ա.Բաղդասարյան/:
5. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի
-----2021թ. N----- հրամանի

ՑԱՆԿ

2021թ. ապրիլի 20-26-ը առցանց ձևով կայացած «Քիմիա» առարկայի Մենդելեևյան 55-րդ միջազգային օլիմպիադայում հաղթած անվանական կրթաթոշակ ստացողների

1	Աղեկյան	Հայկ	ԵՊԲՀ «Հերացի» ա/դ, 11-րդ դաս.	բրոնզե մեդալ
2	Ասատրյան	Լեոնիդ	Քվանտ վարժ., 10-րդ դաս.	բրոնզե մեդալ